ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/03

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ԱՏԱ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 07.01.2022թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.01.2022թ. թիվ 26/26-1/21738-2021 գրությամբ «ԱՏԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 28.12.2021թ. թիվ ՊՆ/02/6846-2021 գրության հիման վրա, 04.01.2022թ. թիվ 26/26-1/21738-2021 գրությամբ նախաձեռնել է «ԱՏԱ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ԱՏԱ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 19.01.2022թ. գրությամբ, հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««ԱՏԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ՆԳ-2022/03 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

<u>Գործի հակիրճ նկարագրությունը</u>

«ԱՏԱ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված թիվ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1 ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Մրցույթ):

Մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության համաձայն՝ «ԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ մասնակցի կողմից չի ներկայացվել իրական շահառուների մասին տվյալները:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը մեկ աշխատանքային օրով՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Այնուհետև՝ գնահատող հանձնաժողովի 23.12.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «ԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից վերը նշված ժամկետում անհմապատասխանությունները շտկվել են, սակայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից գնահատման արդյունքում՝ որոշում է կայացվել «ԱՏԱ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի որ շտկման արդյունքում ներկայացված փաստաթուղթը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Ըստ Պատվիրատուի կողմից ներկայացրած փաթեթում առկա շտկման ծանուցման արտատպման՝ շտկման պահանջը ներկայացվել է մասնակցին 23.12.2021թ.:

Գնահատող հանձնաժողովի 21.12.2021թ. և 23.12.2021թ. տեղի ունեցած նիստի արձանագրությունները հրապարակվել են www.gnumner.am կայքում միայն 29.12.2021թ:

<u>Իրավական հիմքերը և հիմնավորումները</u>.

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային

առաջարկը կամ հայտի ապահովումը,կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ինչպես արդեն հայտնել ենք, «ԱՏԱ» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված թիվ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1 ծածկագրով գնման ընթացակարգին:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության համաձայն՝ «ԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ մասնակցի կողմից չի ներկայացվել իրական շահառուների մասին տվյալները:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով՝ աաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Այնուհետև՝ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «ԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից վերը նշված ժամկետում անհմապատասխանությունները շտկվել են, սակայն՝ գնահատման արդյունքում՝ որոշում է կայացվել «ԱՏԱ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի որ շտկման արդյունքում ներկայացված փաստաթուղթը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա, այն է՝

1. Նախ և առաջ, գնահատող հանձնաժողովի 21.12.2021թ. և 23.12.2021թ. տեղի ունեցած նիստի արձանագրությունները հրապարակվել են www.gnumner.am կայքում միայն 29.12.2021թ: Մինչդեռ Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասը և Օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասը պահանջում են, որպեսզի վերոհիշյալ արձանագրությունները հրապարակվեն տեղեկագրում նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը, ինչը տվյալ դեպքում չի կատարվել /ուշացում համապատասխանաբար 5 և 3 աշխատանքային օրով/:

2. Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ շտկման արդյունքում ներկայացված փաստաթղթում գնահատող հանձնաժողովը արձագրել է անհամապատասխանություն, մասնավորապես ՍՊԸ-ի կողմից լրացված և գնահատող հանձնաժողովին ներկայացրած Հավելված 1.2-ում՝ «Իրական շահառուների վերաբերյալ հայտարարգրի» 4.5.1, 4.5.2. և 4.7.1 կետերը լրացված չեն: Բանն այն է, որ «ԱՏԱ» ՍՊԸ-ի միակ սեփականատերը և իրական շահառուն հանդիսանում է մեկ անձ՝ ՍՊԸ-ի տնօրեն Ա.Մովսեսյանը, և համապատասխանաբար, տվյալ անձի մոտ ստեղծվել է տպավորություն, որ նման պարագայում Հավելված 1.2 նշված տողերը լրացման կարիք չունեն:

3. Պատվիրատուի կողմից սույն ընթացակարգի շրջանակներում ՀՀ ՖՆ ներկայացրած փաթեթի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հայտում անհամապատասխանությունը արձանագրվել է գնահատող հանձնաժողովի կողմից 21.12.2021թ., սակայն ըստ armeps համակարգից Պատվիրատուի կողմից կատարված և փաթեթին կցված արտատպման (ֆայլի անունը՝ Print Screen)՝ մասնակցին շտկման ծանուցումը/արձաագրությունը ուղարկվել է 23.12.2021թ.:

Մինչդեռ Կարգի 41-րդ կետի պահանջների համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը պարտավոր էր այդ մասին մասնակցին ծանուցել հենց նույն օրը, այն է՝ 21.12.2021թ., ինչը տվյալ դեպքում, փաստորեն, չի կատարել:

Մինչդեռ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարի՝ նույն նիստի օրը արձանագրված անհամապատասխանության մասին էլեկտրոնային եղանակով մասնակցին տեղեկացնելը Պատվիրատուի պարտականությունն է, այն

իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով:

Նման պարագայում քանի որ գնահատող հանձնաժողովի կողմից չի պահպանվել Կարգի 41-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթը, ուստի գտնում ենք, որ նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ նույն փաստական հանգամանքներում (Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետի խախտման հիմքով) գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանը թիվ ՍՑ-ՆԳ-2021/298 ընթացակարգով 04.11.2021թ. կայացրած թիվ ՍՑ-ՆԳ-2021/298 որոշմամբ մերժվել է «ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը: Նույնը արձանագրվել է նաև թիվ ՍՑ-ՆԳ-2021/312 ընթացակարգով:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները և Ընկերության դրսևորած վարքագիծը՝ «ԱՏԱ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ի լրումն վերը նշված դիրքորոշման՝ Ընկեությունը հայտնել է հետևյալը.

«Ի լրումն «ԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից թիվ ՍՑ-ՆԳ-2022/03 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացրած դիրքորոշման՝ ներկայացվում են հետևյալ լրացուցիչ նկատառումը.

Ինչպես արդեն նշել ենք, Պատվիրատուի կողմից սույն ընթացակարգի շրջանակներում ՀՀ ՖՆ ներկայացրած փաթեթի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հայտում անհամապատասխանությունը արձանագրվել է գնահատող հանձնաժողովի կողմից 21.12.2021թ., սակայն ըստ armeps համակարգից Պատվիրատուի կողմից կատարված և փաթեթին կցված արտատպման (ֆայլի անունը՝ Print Screen)՝ մասնակցին շտկման ծանուցումը/արձաագրությունը ուղարկվել է 23.12.2021թ.:

Ըստ այդմ, քանի որ Ընկերությունը ծանուցում/արձանագրությունը ստացել է 23.12.2021թ., համապատասխանաբար շտկումը այդ օրը կատարվել է ոչ թե ՍՊԸ-ի տնօրենի, այլ ՍՊԸ-ի աշխատակցի կողմից, ով ընկերության իրական շահառուների մասին չէր տիրապետում ամբողջական տեղեկատվության: Մինչդեռ եթե ծանուցում/արձանագրությունը ստացվել ոչ թե 23.12.2021թ., այլ սահմանված ժամկետում (21.12.2021թ.), համապատասխանաբար այդ օրը ՍՊԸ-ի տնօրենը ծանուցման/արձանագրության ժամանակին ստանալու լեգետիմ ակնկալիքի պայմաններում կտեղեկանար առաջացած խնդրի մասին և ինքը ճիշտ կլրացներ նշված հավելվածը:

Ելնելով վերոգրյալից՝ ևս մեկ անգամ խնդրում եմ հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները և Ընկերության դրսևորած վարքագիծը՝ «ԱՏԱ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձ-նած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«ԱՏԱ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/03 ընթացակարգի շրջանակներում 10.01.2022թ. ժամը 09:40-ին և 20.01.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը 20.01.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստին, ով պնդել է ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 28.12.2021թ. թիվ ՊՆ/02/6846-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «ԱՏԱ» ՍՊԸ-ն:

Հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «ԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է ընթացակարգի հրավերով պահանջվող իրական շահառուների մասին տվյալները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովն առաջարկել է մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «ԱՏԱ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ուղարկել է պահանջվող շտկումը, սակայն այն գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին չհամապատասխանող, ուստի գնահատող հանձնաժողովը մերժել է «ԱՏԱ» ՍՊԸ-ի հայտը:

Կից ներկայացվում են մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/03 ընթացակարգի շրջանակներում 10.01.2022թ. ժամը 09:40-ին և 20.01.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/03 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/03 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԱՏԱ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն

արձանագրել է, որ «ԱՏԱ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), մասնավորապես՝ «ԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է Ընթացակարգի հրավերով պահանջվող իրական շահառուների մասին տվյալները:

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 23.12.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ 23.12.2021թ. շարունակելով հայտերի բացման և գնահատման նիստը, գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԱՏԱ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ուղարկել է պահանջվող շտկումը, սակայն այն գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է Ընթացակարգի պահանջներին չհամապատասխանող: Մասնավորապես՝ հավելված 1.2-ում նշված է էլեկտրոնային աճուրդ, գնանշման հարցման փոխարեն: Բացի այդ հավելված 1.2-ի՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 4.5.1, 4.5.2, 4.7.1 դաշտերը լրացված չեն և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.01.2022թ. թիվ 26/26-1/21738-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 28.12.2021թ. թիվ ՊՆ/02/6846-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշումները, ինչպես նաև գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե ***<u>հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ</u>*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ***<u>, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն</u>***

<u>օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u> Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: ***<u>Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:</u>***

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԱՏԱ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԱՏԱ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), մասնավորապես՝ «ԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է Ընթացակարգի հրավերով պահանջվող իրական շահառուների մասին տվյալները:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 23.12.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ 23.12.2021թ. շարունակելով հայտերի բացման և գնահատման նիստը, գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԱՏԱ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ուղարկել է պահանջվող շտկումը, սակայն այն գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է Ընթացակարգի պահանջներին չհամապատասխանող: Մասնավորապես՝ հավելված 1.2-ում նշված է էլեկտրոնային աճուրդ, գնանշման հարցման փոխարեն: Բացի այդ հավելված 1.2-ի՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 4.5.1, 4.5.2, 4.7.1 դաշտերը լրացված չեն և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը սույն ընթացակարգի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված դիրքորոշմամբ մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Պատվիրատուի կողմից սույն ընթացակարգի շրջանակներում ՀՀ ՖՆ ներկայացրած փաթեթի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հայտում անհամապատասխանությունը արձանագրվել է գնահատող հանձնաժողովի կողմից 21.12.2021թ., սակայն ըստ armeps համակարգից Պատվիրատուի կողմից կատարված և փաթեթին կցված արտատպման (ֆայլի անունը՝ Print Screen)՝ մասնակցին շտկման ծանուցումը/արձաագրությունը ուղարկվել է 23.12.2021թ.:

Ըստ այդմ, քանի որ Ընկերությունը ծանուցում/արձանագրությունը ստացել է 23.12.2021թ., համապատասխանաբար շտկումը այդ օրը կատարվել է ոչ թե ՍՊԸ-ի տնօրենի, այլ ՍՊԸ-ի աշխատակցի կողմից, ով ընկերության իրական շահառուների մասին չէր տիրապետում ամբողջական տեղեկատվության: Մինչդեռ եթե ծանուցում/արձանագրությունը ստացվեր ոչ թե 23.12.2021թ., այլ սահմանված ժամկետում (21.12.2021թ.), համապատասխանաբար այդ օրը ՍՊԸ-ի տնօրենը ծանուցման/արձանագրության ժամանակին ստանալու լեգետիմ ակնկալիքի պայմաններում կտեղեկանար առաջացած խնդրի մասին և ինքը ճիշտ կլրացներ նշված հավելվածը»:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի ***<u>նորմը մեկնաբանվում է</u>՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ <u>ելնելով</u>***

դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսինքն՝ Կարգի 41-րդ կետով սահնմանված է, հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարի համար էլեկտրոնային եղանակով նույն օրը դրա մասին մասնակցին ծանուցելու իմպերատիվ պահանջ, որի չպահպանման դեպքում, կարող են անտեսվել այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը և հանգեցնել սխալ մեկնաբանման:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են

կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը ***<u>նույն օրը</u>*** դրա մասին էլեկտրոնային եղանակով

ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, մինչդեռ՝ արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ Ընկերությունը նույն օրը՝ ***21.12.2021թ.,*** ծանուցվելու փոխարեն, Պատվիրատուի կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկված փաստաթղթերի համաձայն, ծանուցվել է ***23.12.2021թ.:***

Վերոգրյալ իրավական նորմերի մեկնաբանման և սույն գործի փաստական հանգամանքների համադրման արդյունքում արձանագրում եմ, որ Ընկերությունը՝ Ընթացակարգի գնահատող հանձնժողովի կողմից Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջի համաձայն արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցված չինելու փաստով պայմանավորված, զրկվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավունքները լիարժեք իրացնելու հնարավորությունից:

Վերոգրյալ փաստական հանգամանքների ուժով՝ գտնում եմ, որ Պատվիրատուի կողմից Կարգով սահմանված իմպերատիվ պահանջի խախտման արդյունքում ծագած բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության և հանգեցնել վերջինիս նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման հիմքով պատասխանատվության միջոցի կիրառմանն, այն է՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.01.2022թ. թիվ 26/26-1/21738-2021 գրությամբ «ԱՏԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**